UN Partnership on the Rights of Persons with Disabilities

ILO | OHCHR | UNDESA | UNDP | UNESCO | UNFPA | UNICEF | UN WOMEN | WHO

Enabling Social Impact Consulting Group

Partnership for informed decision-making and positive social impact

# *Հաշմանդամության սահմանման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում*

ՆՈՅԵՄԲԵՐ 25, 2019Թ.

*Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների առկայությունը և տվյալների փոխանակման բացերը*

*Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների արձանագրման գործող և առաջարկվող մեթոդների համեմատությունը*

*ՀԱՍՄԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ*

# ՔՆՆԱՐԿՎՈՂ ԹԵՄԱՆԵՐԸ

- Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվության առկայությունը և տվյալների հետ առկա խնդիրները
- ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրման 2 մոտեցումների քննարկում՝ առավելություններն ու թերությունները
- ԿԱՊԿ գնահատման արդյունքների և կարիքի արձագանքման քայլերի ընթացիկ մշտադիտարկում
- Տեղեկատվության միջգերատեսչական փոխանակման մեխանիզմների հնարավորություն

# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Հաասարակությունը չի կարող արդար լինել, քանի դեռ բոլոր երեխաները ներառված չեն, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաները չեն կարող ներառվել, քանի դեռ նրանց մասին հավաքագրվող և վերլուծվող որակյալ տվյալները նրանց տեսանելի չեն դարձնում:*

ԱՇԽԱՐՀԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ 2013-ԻՆ: Հաշմանդամություն ունեցող երեխաներ

# ԴԻՏԱՐԿՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ուսումնասիրությունը կատարվել է 2017 թ. դեկտեմբերի վերջին

- Վիճակագրական կոմիտե 2016-2017 թթ. տարեկան զեկույցներ
- ՀՀ ԱՍՀՆ
- ՀՀ ԿԳՄՍ
- ՀՀ ԱՆ
- ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան
- «Սեյվ դը չիլդրեն» (Save the Children)
- Human Rights Watch

- ✓ հաշվետվություններ,
- ✓ վեբ կայքեր
- ✓ վարչական տվյալներ

# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- ✓ Առկա է ՏՏ համակարգ և հրապարակվում է բավական ծավալուն տեղեկատվություն ՀՀ ԱՆ կայքում
- ✓ Ըստ ախտորոշման հաշմանդամություն ունեցող երեխաների մասին՝ ըստ սեռի ու տարիքային խմբերի



# ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՆԱԽԱԾՆՆԴՅԱՆ և ՀԵՏԾՆՆԴՅԱՆ ՍԿՐԻՆԻՆԳՆԵՐ

- ✓ Բնածին հիպոթերիոզ
- ✓ Ֆենիլկետոնուրիա -
- ✓ Կոնքազդրի զարգացող/բնածին հոդախախտ
- ✓ Լսողության նորածնային սկրինինգ
- ✓ Տեսողական խնդիրներ - Անհասության ռետինոպաթիա
- ✓ Սրտի բնածին արատներ

- 2005-2016 թթ. ընթացքում կանխվել է 750 երեխայի առողջական ծանր խնդիրներ:

! *Սակայն ՀՀ ԱՆ-ում կամ ՀՀ ԱՍՀՆ-ում դժվար է պաշտոնական տվյալներ գտնել, որոնք փոխկապակցված ձևով ցույց տան, թե լսողական կամ վերոհիշյալ առողջական որևէ խնդրով երեխաներից քանիսն են ստացել հաշմանդամության կարգավիճակ կամ նրանցից քանիսն են ներգրավվել կրթության մեջ*

# ԵՐԵԽԱՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Երևանի ԱրԲեՄ առողջության կենտրոն
- ✓ Գավառի,
- ✓ Գյումրիի,
- ✓ Արմավիրի,
- ✓ Իջևանի,
- ✓ Արտաշատի,
- ✓ Սպիտակի
- ✓ Վանաձորի
- ✓ Երևանի թիվ 9 պոլիկլինիկա
- ✓ թիվ 92 մանկապարտեզ
- ✓ «Արմենակ և Աննա Թադևոսյանների կենտրոն»
- ✓ «Արարատ» մանկական առողջարան

(Գավառի – Վանաձորի) Երեխաների զարգացման և վերականգնողական կենտրոններ

- ✓ Բուժում և բժշկական ծառայություններ շուրջօրյա խնամքի հաստատություններում ապրող երեխաների

*Սակայն մատուցված ծառայությունները չեն բաշխված ըստ երեխայի հաշմանդամության կարգավիճակի, իսկ մատուցված ծառայությունների չափի ու ծածկույթի մասին պաշտոնական որևէ հաշվետվություն կամ տեղեկատվություն հրապարակված չէ*

# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- Ներառական կրթություն ապահովող դպրոցների թիվը չի հրապարակվում, ստացվել է ԿՏԱԿ-ից – գրավոր հարցման արդյունքում
- ԿԱՊԿ ունեցող երեխաների թիվը՝ չի հրապարակվում
- 2017թ-ին ներառական դպրոցները կազմել էին ընդամենը . Հայաստանի դպրոցների 17%-ը կամ 246 դպրոց
- Այդ դպրոցներում սովորող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը 6,660 էր կամ երկրի հանրակրթական դպրոցներում սովորող բոլոր աշակերտների մոտ 2%-ը

# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ




- Միայն «հաշմանդամ երեխա» կարգավիճակ
- Ոչ մի տեղեկատվություն նրանց մասնակցության մասին
- Մանրամասն տեղեկատվություն ստացած պարագաների մասին, բայց ոչ դեզագրեգացված

# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ







Հաշմանդամություն ունեցող երեխաները, ում նշանակվել է/վճարվել է հաշմանդամության նպաստ կազմել են «հաշմանդամ երեխայի» կարգավիճակ ունեցող երեխաների 92%-ը:

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ (ԿԱՊԿ) ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՈՍՔԸ



# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

- ՀՀ ՎԿ միևնույն վիճակագրական պարբերականում հրապարակված երկու գերատեսչությունների տվյալները հնարավոր չէ համադրել․ առողջապահության ոլորտում ախտորոշված երեխաներից քանիսն են անցել բժշկասոցիալական փորձաքննություն և ստացել հաշմանդամության կարգավիճակ:
- Ըստ տարիքային խմբերի կիրառվում են տարբեր մոտեցումներ․
  - ✓ Առողջապահություն՝ 1-14 տարեկան, 15 տարեկան և 16-17 տարեկան
  - ✓ Սոց աջակցություն՝ մեկ խումբ՝ «մինչև 18 տարեկան»:
- Չի տրամադրվում տեղեկատվություն ՆՈՒՀ-երում, դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին

# ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Տվյալների մատչելիություն.** Հետազոտությունը ցույց տվեց, որ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվության միակ աղբյուրը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պարբերական հրապարակումներն են, հիմնականում՝ ««ՀՀ սոցիալական վիճակը» վերնագրով տարեկան վիճակագրական զեկույցները:

**Դեզագրեգացվածության մակարդակ.** Նույնիսկ եթե տվյալներն առկա են, դրանք չունեն հարկ եղած բաշխվածությունը, ինչը կարևոր է որոշումների կայացման համար: Առողջապահության ոլորտի տրամադրած տվյալները դեզագրեգացված չեն այնպես, ինչպես դա արվում է սոցիալական պաշտպանության ոլորտում: Դա բարդություն է ստեղծում առկա տեղեկատվությունը համադրելիս, վերլուծելիս և տեղեկացված որոշումների կայացման համար միտումներն ու օրինաչափությունները բացահայտելիս:

**Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին մեկ համապարփակ պարբերականի հրատարակումը**, որտեղ կարող են ներկայացվել վարչական տարբեր աղբյուրներից ստացված տվյալները:

# ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ 2 ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ամփոփել 1 տարվա ընթացքում ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների վիճակագրությունը և վերհանել թե

1. ինչպիսի՞ ժողովրդագրական տվյալներ ունեն ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաները,
2. հիմնականում ինչպիսի՞ ֆունկցիայի խանգարումներ են գերակշռում ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ
3. ի՞նչ ծառայություններ են երաշխավորվում ԿԱՊԿ ունեցող երեխաներին
4. ի՞նչ առավելություններ է տալիս ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրումը ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2018թ, հունվարից- դեկտեմբեր ԿԱՊԿ գնահատումներ

2018 թ. ԱՀԿ ՖՄԴ փորձնական գնահատումներ

3,513 երեխաների ԿԱՊԿ գնահատման արձանագրություններ

1. ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ
2. տեսողության ֆունկցիաներ
3. լսողության ֆունկցիաներ
4. շարժողական ֆունկցիաներ
5. ձայնի և խոսքի ֆունկցիաներ

30 երեխաներ ի ԿԱՊԿ գնահատման ՖՄԴ պրոտոկոլներ

# 1. ԻՆՉՊԻՍԻ՞ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՆԵՆ ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՆՑՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ






# ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՆՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ, %






# ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԻ, %




- Վերագնահատման արդյունքում, ամեն 4-րդ երեխայի մոտ հաղթահարվում է ֆունկցիոնալ դժվարությունը և երեխաները կարողանում են սովորել առանց լրացուցիչ մասնագիտական աջակցության

# 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ, N=3513



# 2. ԿԱՊԿ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ՝ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՆՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ, %



# ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԽԱՆԳԱՐՄԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԸ

**Չորս խնդիր միաժամանակ**

Ինտելեկտուալ (մտավոր), տեսողության , շարժողական, ձայնի և խոսքի ֆունկցիաներ 29 երեխա

Ինտելեկտուալ (մտավոր), լսողության, շարժողական, ձայնի և խոսքի ֆունկցիաներ 10 երեխա

Ինտելեկտուալ (մտավոր), տեսողության , լսողության, ձայնի և խոսքի ֆունկցիաներ 2 երեխա




**Երեք խնդիր միաժամանակ**

Լսողության, շարժողական, ձայնի ու խոսքի ֆունկցիաներ 2 երեխա

Տեսողության, շարժողության, ձայնի ու խոսքի ֆունկցիաներ 1 երեխա

Ինտելեկտուալ (մտավոր), լսողության և շարժողական ֆունկցիաներ 1 երեխա

Տեսողության, լսողության և ձայնի և խոսքի ֆունկցիաներ 2 երեխա

# ԿԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Հաշմանդամություն ունեցող երեխաների մասնաբաժինը որոշելու համար դիտարկվել են այն երեխաներն, ում ֆունկցիաների խանգարումը ծանր և խորը աստիճանի էր։
- ԿԱՊԿ ունեցող 2754 երեխաներից ֆունկցիայի ծանր և խորը խանգարումներ ունեին 20%, այսինքն ամեն 5-րդ երեխան հնարավոր է, որ ունի նաև հաշմանդամություն

# ԿԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ



# ԱՀԿ ՖՄԴ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ 30 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

b100 դասի ներքո դիտարկվում են մարդու բոլոր հոգեկան ֆունկցիաները, որոնք կապված են ուղեղի ֆունկցիաների հետ՝ ընդհանուր հոգեկան ֆունկցիաները, ինչպիսիք գիտակցությունը, էներգիան և եռանդը, և սպեցիֆիկ հոգեկան ֆունկցիաները, ինչպիսիք են հիշողությունը, լեզվի և հաշվարկներ կատարելու հոգեկան ֆունկցիաները։

d100 - *Սովորելը և գիտելիքը կիրառելը* ոլորտի համար արձանագրության մեջ ներառված են 8 ծածկագրեր. զգայարանների նպատակային օգտագործումից ներառված են d110 և d115 ծածկագրերը, գիտելիքը կիրառելու կարողությունները գնահատելու համար դիտարկվում են d161, d163, d166, d170, d172 և d175 ծածկագրերը։

## *Միայն ինտելեկտուալ/ մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների N=14 բաշխումն ըստ «Սովորելը և գիտելիքը կիրառելը» ոլորտում ունեցած դժվարությունների*

| | Արձանագրված ֆունկցիաների խանգարման ենթակատեգորիաները | ՖՄԴ ծածկագիրը | Որակիչները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 0 | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Դիտելը (նայելը) | d110 | 8 | 5 | 1 | | |
| 2 | Լսելը | d115 | 9 | 3 | 2 | | |
| 3 | Ուշադրությունը պահպանելը | d161 | | 4 | 5 | 3 | 2 |
| 4 | Մտածելը | d163 | 2 | 3 | 3 | 4 | 2 |
| 5 | Կարդալը | d166 | | 6 | 2 | 3 | 3 |
| 6 | Գրելը | d170 | | 5 | 3 | 4 | 2 |
| 7 | Հաշվելը | d172 | | 5 | 3 | 3 | 3 |
| 8 | Խնդիրներ լուծելը | d175 | | 5 | 3 | 3 | 3 |

## Ինտելեկտուալ/ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e100 «Արտադրանք և տեխնոլոգիաներ» ենթաոլորտի

| | | Չունի կարիք | Ունի թեթև աջակցության կարիք ժամանակի 5-24% | Ունի միջին աջակցության կարիք ժամանակի 25-49% | Ունի ծանր. ինտենսիվ աջակցության կարիք ժամանակի 50-95% | Միշտ ունի աջակցության կարիք | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| e110 | Անձնական սպառման արտադրանք կամ նյութեր | 5 | 5 | 2 | 2 | | 14 |
| e115 | Առօրյա կյանքում անձնական օգտագործման արտադրանք և տեխնոլոգիաներ | 4 | 4 | 4 | 2 | | 14 |
| e125 | Հաղորդակցության համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ | 8 | 4 | | 2 | | 14 |
| e130 | Կրթության համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ | 1 | 6 | 3 | 4 | | 14 |
| e140 | Մշակույթի, հանգստի ու սպորտի համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ | 8 | 3 | | 3 | | 14 |

# Ի՞ՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՏԱԼԻՍ ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԱՀԿ ՖՄԴ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ

1. Մասնագետները ստանում են առավել ընդլայնված պատկեր երեխայի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ,
2. Առավել արագ են տեսնում դժվարությունների ոլորտն ու ծանրության աստիճանը,
3. Կողմնորոշվում ծառայությունների ծավալի վերաբերյալ և
4. Հասկանում երեխայի գործունեությանն ու մասնակցությանը նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների ազդեցությունը

# Ի՞ՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՏԱԼԻՍ ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԱՀԿ ՖՄԴ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ

1. Միջավայրային գործոնների ազդեցության դիտարկումը հնարավորություն է տալիս տեսնելու թե հատկապես **որ** ծառայություններն են առավել հրատապ կամ խիստ անհրաժեշտ տվյալ երեխայի համար՝

   - ✓ ապրանքներ ու տեխնոլոգիաներ,
   - ✓ վերաբերմունքի փոփոխություն,
   - ✓ մասնակցությանը նպաստող հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանք,
   - ✓ ծրագրային հարմարեցումներ.

# Ի՞ՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՏԱԼԻՍ ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԱՀԿ ՖՄԴ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ

ԿԱՊԿ գնահատում անցած երեխաները, բացի մասնագետների միջամտությունից, ունեն տարբեր այլ ծառայությունների կարիք –

ԿԱՊԿ արձանագրության գործող ձևաչափը դա արտացոլելու հնարավորություն չի ընձեռում

## ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄԸ՝

- ✓ Հնարավորություն է տալիս տեսնել, թե գործունեության ու մասնակցության ոլորտներում որտեղ ունեն ֆունկցիոնալ սահմանափակումներ և ինչպիսի միջավայրային գործոններ են պետք նրանց լիարժեք մասնակցության ապահովման համար:
- ✓ Հաշվի է առնում երեխայի կարողության ու կատարողականի հետ կապված խնդիրները՝ նրա զարգացման ու կրթության կազմակերպման համար թիրախային աջակցության տրամադրման համար:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արձանագրությունը պետք է հնարավորություն ընձեռի ամփոփելու, թե ինչպիսի թիրախներ են սահմանվել երեխաների համար, ինչ նպատակներով՝ կրթական և սոցիալիզացիայի, և որքանով է հնարավոր եղել ապահովել այդ նպատակներին հասնելը,
- Նպատակահարմար է գնահատման արդյունքների արձանագրման ժամանակ կիրառել ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերն ու որակիչները,
- Քայլեր են պետք իրականացնել ակտիվացնելու ու զարգացնելու տարածքային ու հանրապետական մակարդակում տեղեկատվության պահանջի ու տվյալների օգտագործման մշակույթի ձևավորման համար, արդյունավետ քաղաքականության հիմքում դնելով որակյալ տվյալների  հիման վրա կազմված եզրակացությունները

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

www.esi.am

Partnership for Informed Decision Making and Positive Social Impact

Գործընկերություն հանուն դրական սոցիալական ազդեցության ապահովման՝ իրազեկ որոշումների կայացման համար

Enabling Social Impact Consulting Group

Partnership for informed decision-making and positive social impact